



## Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, տարածք 3

Հեռ.՝ +374 99 515 600

Էլ. հասցե՝ [ldpf.foundation@gmail.com](mailto:ldpf.foundation@gmail.com), [ldpf.am](http://ldpf.am)

### Կարծիք

«Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու»  
մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

17.01.2023 թ. Կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվել «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ):

Նախագծով, ի թիվս այլ կարգավորումների, առաջարկվում է կատարել գործող օրենքում հետևյալ փոփոխությունները, որոնք, կարծում ենք, խնդրահարույց են և հետադիմական, համեմատ «Դատախազության մասին» գործող օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) կարգավորումների: Այսպես.

1. Նախատեսվում է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) կազմից հանել Արդարադատության ակադեմիայի ռեկտորին: Նշված փոփոխությունն, ըստ հեղինակի, պայմանավորված է նրանով, որ գործող կարգավորումների պայմաններում կարող են առաջանալ շահերի բախման իրավիճակներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովը առանցքային դերակատարում ունի դատախազների թեկնածությունների ցուցակի կազմման, ինչպես նաև դատախազների ատեստավորման գործընթացում, իսկ Արդարադատության ակադեմիան իրականացնում է դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը և դատախազների վերապատրաստումը:

2. Նախատեսվում է Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը վերախմբագրել՝ դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակները արտահերթ կարգով ձևավորելիս վերացնելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից բարեվարքության վերաբերյալ եզրակացություն ստանալու պահանջը, իսկ Նախագծով սահմանված նոր խմբագրությամբ օրենքի 37-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում թվարկված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակների դեպքում՝ ըստ էության վերացնելով նաև Հանձնաժողովի դրական եզրակացության առկայության անհրաժեշտությունը (վերջին դեպքերում սահմանվում է պարզապես, որ դատախազը ցուցակում ընդգրկվում է իր անմիջական վերադասի պատճառաբանված

զեկուցագրի հիման վրա՝ գլխավոր դատախազի հրամանով): Նշված փոփոխության որևէ հիմնավորում տեղ չի գտել Նախագծի ներկայացված հիմնավորումներում:

Առաջին կետում նշված փոփոխության վերաբերյալ, կարծում ենք, որ Արդարադատության ակադեմիայի ռեկտորի՝ Հանձնաժողովում ընդգրկվելու պարագայում շահերի բախման վերաբերյալ պատճառաբանությունը առնվազն ներկայացված փաստարկումների շրջանակում (ծանոթ ենք նաև ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի հանձնաժողովի նիստի ժամանակ ներկայացված բանավոր հիմնավորումներին) չի հիմնավորվում, պարզ չէ հատկապես՝ ինչպիսի շահեր է յուրաքանչյուր կառույցին վերագրում հեղինակը, որոնց բախման մասին է խոսքը, առավել ևս, որ հենց հեղինակի և դատախազության ներկայացուցչի փաստարկումներով է արձանագրվում այն օբյեկտիվ իրողությունը, որ Արդարադատության ակադեմիայի գործունեության առաջնային նպատակն է հենց որակյալ կադրերի պատրաստումը/վերապատրաստումը, դրանցով այդ թվում դատախազական համակարգի ապահովումը, ինչը ավելի շատ հնարավոր է որակել որպես շահերի ընդհանրության, այլ ոչ դրանց բախման իրավիճակ:

Ինչ վերաբերում է երկրորդ կետում նշված փոփոխությանը, գտնում ենք, որ այս կարգավորումը ուղղակի հետադիմական է համեմատ գործող կարգավորմանը և հատկապես Կառավարության հայտարարած՝ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման և դրանում հետևողականության մոտեցում որդեգրելու համատեքստում: Բացի դրանից՝ ինչպես նշվեց, հեղինակը, ի տարբերություն Նախագծում ընդգրկված այլ փոփոխությունների, այս փոփոխության մասով չի ներկայացրել որևէ փաստարկում ո՛չ գրավոր հիմնավորման մեջ, ո՛չ ԱԺ պետական-իրավական հարցերի հանձնաժողովի նիստում: Այդպիսիք չհանրայնացվելու դեպքում նաև հնարավոր չէ դատողություններ անել փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ:

## **Առաջարկ**

Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկում ենք ձեռնպահ մնալ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասում և 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նախանշված փոփոխությունները կատարելուց: